

Աղբիւրի յաւելուած

լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 3 կիրակի 19 յունւարի | ուրերորդ տարի 1897

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիսի բաժանորդները ևրաւիրւում են, հետևեալ ցուցակից ստանալ պրեմիաները: Օտար քաղաքի բաժանորդներին պրեմիաները կուղարկւի Աղբիւրի № 1-ի հետ: Միքայէլ Նալբանդեանի պատկերը միայն ԱՂԲԻՒՐ կամ ՏԱՐԱԶ ստացողի համար արժէ ճանապարհածախսով 1 ր. 20 կ. երեք պրեմիաները միասին 3 ր.:

Աղբիւր-Տարազի *պրեմիաներն են՝* 1) Միքայէլ Նալբանդեանի *վերջին լուսանկարից պատրաստուած մեծադիր փոտո-գրաւիւր պատկերը,* 2) *Մայրիկի ննջարանում, մի շքեղ խրոմօ,* 3) *Ոսկէ շղթաներում, կամ Հարեմի աղջիկը,* 4) *Իւրաքանչիւր ամիս Պարիզի մոդեր, բացատրութիւններով:*

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (արտասահման 4 ր. *կամ* 12 *ֆր.*), ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. (արտասահման 10 ր. *կամ* 30 *ֆր.*), ամսական *Տարազը* 50 կ. *Աղբիւրը*—25 կ. *պրեմիաները ստանում է* Աղբիւր-Տարազ *միւռնոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի:* Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Таразъ *կամ* Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

ԱՐՏԱՒԱԶԴ

—

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

I

Քաղին չէ միայն
Որ երկրի վրան
Թագաւորում է անվերջ, անսահման,
Որ լոյս ճառագած,
Որ սէր սերմանած,
Խաղաղութիւն է աւետում մարդկան։
Այլ չարը նոյնպէս,
Չարը հոգեպէս
Խռովարարի գործերով անարդ
Դրել է մի գահ,
Մի գահ այլանդակ
Աշխարհի վրայ խոպան դժնդակ։
Լոյսից ճագում է և սէր երջանիկ.
Բախտաւորութիւն մարդկային սեռին,
Խաւարը ծնում բազմաթիւ չարիք
Եւ մահ է բերում մեղսոտ աշխարհին։
Չարը և բարին միշտ միմեանց ներհակ,
Սկզբունքներով իսպառ հակառակ,
Մէկը շինում է, միւսը աւերում
Մէկը ստեղծում, միւսը գերում։
Եւ այսպէս անվերջ կռիւ, մրցութիւն,
Վէճ է ամեն տեղ, ամեն ժամանակ
Մինչև որ բարին,
Այդ ուժը վերին,
Կըտանէ իսպառ յաղթանակ վերջին։

II

Դարերից ի վեր դևը տակաւին
Թափառում է երկրի վրայ։
Եւ ուր դնում է ոտքը առաջին
Խառնակչութիւն է ձգում նա այնտեղ,
Թունաւորելով սրտերը անմեղ։
Եղաւ մի անգամ որ դևն այլանդակ
Մտաւ արքունի Հայոց ապարանք.
Նա վերը թռաւ,
Խորքերը մտաւ
Փոթորիկների կատաղի ուժով։
Եւ մի վայրկեանում լարեց մի մեծ դաւ
Ու այնուհետև
Անհետ նա կորաւ։

III

Նա չէ արքայի որդին անարատ,
Նա չէ արքայի ծնունդն հարազատ,
Այլ նա մի դև էր, մի դև դժնդակ
Եւ անէծքների մի լի յիշատակ։
Դևերը մի օր դիշերւայ կէսում
Գողացան յանկարծ Արտաւազդ մանկան
Եւ նրա փոխան նրա անկողնում
Դրեցին մի դև մանկանը նըման։
Եւ այսպէս ահեղ դևը Արտաւազդ
Սրնուցեց իր մէջ հոգի դիւային
Եւ այդ չար հոգով չարիքներ բերեց
Իր հօրն, իր երկրին,
Իր ազգի գլխին։

IV

„Ո՛հ տայր լինէ գետուն ծխանի
„Եւ զառւտուն նաւասարդի
„Չրվազեն եզանց և զվազեն եղջերւոց
„Մեք վող հարուաք և թմբկի հարկանէաք։

Մագիստրոս

Անցնում են դարձեալ տարիները տասնեակ
Բախտը չէ խնդում այլ ևս արքային,
Եւ ծանր հոգսեր, որդին անառակ
Բերում են թախիծ, գառնութիւն յետին
Նրա բեկբեկուած, նրա հէգ սրտին։
Տխուր կնճիռներ ճակատին դիզուած,
Ցամաքած դէմքը ալեւոր կեանքի
Արտայայտում են սրտում կուտակուած
Անհուն վշտերը, վշտեր զրկանքի։
Տառապում է նա յոգնած, վաստակած
Կրելով հոգսեր տարտամ աշխարհի,
Ահաբեկւում է ուժասպառ եղած,
Որպէս լոկ կայմը խորտակուած նաւի։
Եւ օրհասական ժամին նա տրտում
Տեսնելով որդու կեանքը յոռի,
Որ տգեղ վարքով նախանձը սրտում
Բերում է չարիք անմեղ աշխարհին,
Որ անմիտ բարքով խլում չարութեամբ
Մեծին Սմբատայ փառքը ու պատիւ,
Որ տղայամիտ նա զուռզութեամբ
Մատնում թշնամուն զօրքերը անթիւ.
Մտածում է նա.
«Չարաբախտ իմ ազգ, անբախտ հայրենիք,
«Ինչո՞ւ պծգալի մութ մութ գոյներով
«Պատկերանում են օրերդ գալիք
«Լի աղէտներով և լի վշտերով»։
Եւ նրա առաջ սահուն գարերը

Եւ վոթորկալի և վոսկոխակի
Բացւում են հերթով, որպէս ալիքը,
Որպէս մակարդը փոքրիկ ծովակի։
Եւ մտքով նորէն մահամերձ արքան
Թռչում է հեռուն, հեռուն անձկալի
Մտաբերում է յանկարծ տօնական
Հանդէսները փարթամ, հանդէս արքունի.
Երբ իր բազմաթիւ նախարարներով
Տօնում էր օրը մեծ նաւասարդի,
Եզան, եղջերւի կատաղի կռւով
Եւ նաագներով փող ու թմբուկի։

V

Գահոյքը բևհեզ, դազաղը ոսկի,
Պատմուճան նրա ոսկեթել բանւած,
Տանում են դիակը անմահ արքայի
Առաջից զէնքեր զլխին թագ կապած։
Գահոյքի շուրջը, որդիք, հարճեր, կիներ
Եւ զօր, զօրականք, ամբոխը, խուժան
Հնչում են փողեր և ձղձղան ուժգին
Որպէս հէգ կռւի ճակատը տաժան։
Եւ ապա յետնից սևազգեստ կուսանք
Եւ լալկան կիներ մաղերը փետած՝
Ողբի ու լացի բռնած մի մեծ շարք
Պարում են ողբում արևը մտած,
Որ մինչ կենդանի անուն փառաւոր,
Անթիւ ժողովուրդ իր յետնից տարաւ,
Որ նա իր մահով անթիւ կամաւոր
Զոհերը առած գերեզման մտաւ։
Ամբողջ ժողովուրդ խորին տուգ մտաւ
Եւ ողբաց կոծեց արքայի մահը,
Բայց նա վշտերի դառնութեան գնով
Թողել էր արդէն ունայն աշխարհը։

VI

„Մինչ դու գնացեր. զերկիրն ամենայն
„Ընդ քեզ տարար. ես աւերակացս
„Ո՞րպէս թագաւորեմ“

Խորեն. գր. երկր. գլ. ՀԱ.

Թպլիսը դէմքին խռովւած Հոգով
Որդին Արտաւազդ կանգնած է մօրմոք,
Եւ նրա սրտում, սրտումը վրդով
Եռում են դաժան կրքերը բորբոք։
Տեսնում է դաղաղն, գահոյք փառաւոր,
Տեսնում է շիրիմն արքայավայել,
Նախանձում է նա,
Տրտնջում է նա,
Սրզապատ անշարժ դիակի վրայ
Տեսնում է որ դեռ մարդիկ ժամովին
Գերագաստում են մահը վաղաժամ
Զուզելով այլ ևս ապրել վերստին
Արքայից յետոյ մի վայրկեան անգամ,
Տեսնում է որ դեռ սառը շիրիմից
Տանում է զոհեր սլատիւներ նորից,
Ծնում է նախանձ մեղսալի սրտում
Մեռած արքային դիմելով տրտում՝
Տրտնջում է նա.
«Մինչ դու գնացիր
«Բոլոր երկիրը քեզ հետ էլ տարար,
«Մթթէ ինձ թողիր
«Աւերակներին լշխելու համար»։

VII

„Եթէ դու յորս հեծցես յազատ ի վեր ի Մասիս,
„Զքեզ կալցեն քաջք, տարցեն յազատ ի վեր ի Մասիս,
Անդ կացցես և զլոյս մի տեսցես..

Խորեն. գեոմ. երկր. գլ. ՁԱ.

Դառնացած սրտով արքան շիրիմից
Անէծքներ տեղաց զէպի իր որդին,
Որ դեռ նա մահւան գահոյքի մօտից
Չէր դադրում իրա նախանձոտ հոգին,
Որ դէմքով դաժան նենգամիտ սրտով
Պարսաւանք ուղղում հօր յիշատակին,
Որ դժոխային խաւար ստերով
Սուեր էր ձգում արքայի վառքին։
Դառնացաւ Արքան և տխրեց հոգով,
Որ դեռ նոր բացած անարդ շիրիմից
Անէծք էր գոչում հոգովը վրդով
Վրէժխնդրութեան անէծքներ երկնից,
Դառնացաւ արքան և տխրեց ուժգին,
Որ ծանր հոգսեր, հոգսեր վշտագին
Կուտակւում էին իր երկրի վրայ
Իր անմեղ աղգի գլխին անխնայ։
Անէծքներ գոչեց.
«Եթէ ձին հեծած դու որսի ելնես
«Ստորոտները ազատ Մասիսի՝
«Գերւած քաջերից այլ ևս չըտեսնես
«Խորխորատներում երեսը լոյսի»։

VIII

Լանջովը ձգած գրահը վհի
Արքայ Արտաւազդն որսի է գնում,
Եւ նրա նժոյգն, նժոյգն ամեհի
Մի մի ոստումով դետինը քանդում։
Որպէս վայրենի, երբեմն ուժգին,
Երբեմն կատաղի սլանում է նա

Վիճակի վ. Վիճակի.

Մերթ թաւուտները անտառի մէջին
Եւ արշաւում է լեռների վրայ։
Եւ ամեն անգամ իր մի հարւածով
Տապալում է նա որսեր գեղանի,
Եւ ահա նորից կարծես դիպւածով
Գետին է փռում խոզեր վայրենի։
Բայց ժամը նրա նզովւած կեանքի
Հոլորեց լսպառ, և անհաշտ երկնից
Թափւեց անողորմ անզուսպ բարկութիւն,
Եւ լցաւ անէծք, վրէժխնդրութիւն։
Բարձրացաւ երկրի մառախուղ ու մէգ
Թափւեցաւ վերից մրրիկ անպատում,
Եւ անհաշտ հոգով Արտաւազդը հէդ
Կորաւ վեհ Մասեաց խորխորատներում։

IX

Լսւում են խորունկ քարայրի միջից
Ճիչեր մեղսալի, ճիչեր յուսահատ։
Արձագանքները շղթայի ձայնից
Զաչմամբ հառնում են երկնքին անպարտ,
Զւած է լսպառ արքան Արտաւազդ
Քարայրը մթին, որպէս մահապարտ
Տառապում է նա վհի մէջ անտակ,
Որպէս չար ոգի, մի գէւ դժնդակ։
Ոտքեր ու ձեռքեր կապած շղթայով
Գերել են նրան քաջերը Մասեաց,
Եւ նա դոռում է վոլթորկի ձայնով
Զանթեր արձակում խորունկ քարայրից։
Եւ նրա երկու շներն հարազատ
Կրծում են կրծում կապանքն անրնկճատ.
Երկաթի ամուր շղթան շարունակ
Պաշւում է նրանց ժանիքների տակ։
Եւ ահա արքան նորից նոր ուժով
Փշրում է շղթան լցւած վրէժով,
Եւ ճիգ է թափում խորտակել կապան
Աւերել աշխարհը և դարձնել խոպան։

X

Ութըսնեմսին դարբնոցի միջից
Կռանի երեք հարւածը նորից
Կռում է, կոփում արքայի շղթան,
Նորոգում նրա տանջանքը դաժան։
Եւ ամեն անգամ մինչդեռ ծանրագին
Հարւած է տալիս կռանը սալին,
Անէծք է թափում դարբինը նորից
Գերւած արքայի գլխին մեղսալից։
—Գարեր են անցել, դարեր այն օրից
Բայց մինչև այսօր դարբնոցի միջից
Լսւում են յամր դարկերն անդադար
Արքայի շղթան կոփելու համար։
—Եւ դարեր կ'անցնեն, բայց դեռ շարունակ
Սալը կ'որոտայ ծանր մուրճի տակ.
Կրկարղայ դարբինն նզովք անհամար
Մահապարտ, մեղաւոր արքայի համար։
Եւ քանի հաշտ են երկիրն ու երկինք,
Խորտակելու չէ շղթան տանջանաց,
Այլ նա ամրակուռ, անվերջ ու անանց
Յաւտեան է, ահա, արքայի մեղաց։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ՄՈՒՐՏԻՐՈՍԵԱՆ

ԹԷՈԴՈՐԱ. *)

Պատմական վէպ Ի. Ֆիօրենտինոյի

(Շարունակութիւն)

XIX

ԿԱՆԱՉՆԵՐԸ

Քրջերին ուսուցանող Ալաչիոյի աղջիկը մի օր երդւել էր որ վրէժխնդիրը պէտք է լինի կանաչներին։ Թէոդորայ կայսրուհին չէր մոռացել այդ։ Ինչպէս մեզ յայտնի է մայրաքաղաքի բնակչութիւնը բաժանւած էր երկու թշնամական բանակի՝ կանաչների և կապոյտների։ Այդպիսով մայրաքաղաքի բնակիչների մի կէսը տրամադրւած էր դէպի Թէոդորան, իսկ միւսը ատում էր նրան։ Ի հարկէ այդ երկուսի մասին էլ կայսրուհին յայտնեց նաև իր ամուսնուն։ Յուստինիանը, որ երբէք իր երկրպագած Թէոդորայի ցանկութիւնների հակառակ չէր եղել, նոյնպէս պաշտպանում էր կապոյտներին և հալածում կանաչներին։ Նախարարները՝ կայսրին և նրա ամուսնուն շողոքորթելու նպատակով աշխատում էին նոյնպէս կանաչներին հալածելու և կապոյտներին պաշտպանել։ Այդպիսի վշտալի խառնակութիւնների պատճառով կուսակցութիւնների թշնամութիւնը սահմանից անցաւ։ Ապստամբեցաւ եղբայրը եղբօր դէմ, հայրը որդու դէմ, որդին հօր դէմ։ Քաղաքական սարսափելի պատերազմ ծագեց։ Ընտանեկան հանդստութիւնը խանգարւած էր։ Ասպարէզ դուրս եկան օրէնքի հակառակ մարդիկ. գողերը, յափշտակողները, սրիկաները միացան կապոյտների խմբակին և սկսեցին սարսափելի չարագործութիւններ անել։ Սկզբում նրանք յարձակւում էին իրանց հակառակորդ կանաչների վրայ, իսկ յետոյ նրանցից էլ անհանգիստ անում, ում միայն ձեռքները կրձգէին։ Արեգակի մայր մտնելուց յետոյ ոչ ոք չէր համարձակւիլ դուրս գալ տանից։ Պաշտպանութիւն խնդրել իշխանութիւնից բոլորովին աւելորդ էր։ Կապոյտների կուսակցութեան պատկանողը լինչ յանցանք էլ

*) Տես Տարազ 1896 թ. № 49.

զոքեր, միշտ արդարանում էր, իսկ եթէ կանայքը բռնէր և բոլորովին արդար լինէր, առանց բողոքելու դատապարտում էր:

Կապոյտները մայրաքաղաքի կատարեալ տէրն էին դարձել: Եթէ մէկը դիտաւորութիւն ունէր վրէժխնդիր լինել իր թշնամուն, նա միանում էր կապոյտների կուսակցութեանը և օրը ցերեկով, իշխանութեան աչքի առաջ, սպանում էր նրան վաղոյի մէջ տեղը: Ոչ մէկ տեղ ապրութիւն չկար. մինչև անգամ եկեղեցիները չէին ծառայում յուսալի ապաստան: Կապոյտները հալածում էին իրանց թշնամիներին մինչև անգամ եկեղեցիներում, սպանելով նրանց պատարագի ժամանակ նոյն իսկ բեմերի վրայ: Կապոյտների հետ միացած ոտրուկները ստիպում էին տէրերին ազատութիւն տալ իրանց: Պարատէրերը հրաժարւում էին իրանց ստանալիքներից, հայրերը իրանց որդկերանցից, մարդիկ իրանց կանանցից: Սարսափելի օրեր էին հասել Կոստանդնուպոլսի բնակիչների համար, վաղոցներում ամենայն օր կատարւում էին խռովարար ոճրագործութիւններ և բռնութիւններ:

Առաջ բերենք բազմաթիւ օրինակներից մէկը, որի մասին չիշում է պատմութիւնը: Մայրաքաղաքի մի շատ պատուաւոր և հարուստ մարդ, մէկ անգամ բոսփորի ափին իր կնոջ հետ զբոսնելիս դժբախտութիւն ունեցաւ պատահելու մի նաւակի, որ վարում էին կապոյտ կուսակցութեանը պատկանող սրիկաները: Զարագործները հաւանեցին երիտասարդ տիկնոջը, ուստի խլեցին մարդու ձեռքից, ներս տարան իրանց նաւակի վրայ և ապա լողացին բոսփորի մէջ տեղը: Որքան աշխատում կր, որքան աղաղակում էր զոհը, ոչինչ չէր կարողանում օգնել, զօրեղ ձեռքեր բռնած ունէին նրան: Վերջապէս նա գործ դրեց իր վերջին ոյժը, բոլոր յափշտակողներին, ընկաւ ջրի մէջ և խեղդամահ եղաւ ամուսնու աչքի առաջ: Այս բոլոր յափշտակութիւնների և բռնութիւնների պատճառով մայրաքաղաքի բոլոր բնակիչները սարսափելի ատելութիւն յառաջ բերին կառավարութեան և թշնամացած խմբակների մէջ: Մի կայծ էր բաւական, որ կարողանար վառել թաքնւած այրւող նիւթը և ընդհանուր ապստամբութեան պատճառ լինէր, ինչպէս հրդեհի բոցը, որ չի խնայում ոչինչ և ոչ ոքի: Նախարարները ուշադրութիւն չէին դարձնում վտանգաւոր նշանների վրայ, նրանք բացարձակ քաջալերում էին ոճրագործութիւնները, գնահատելով արդարադատութիւնը ոսկու քաշով: Նա մանաւանդ ժողովուրդը արհամարում էր երկու մեծատանների՝ Զիովաննի Կալադոչչիային և Տրիբոնիանոսին: Առաջինը, որ մի կոպիտ գիւղացի էր, և պատահմամբ հասել էր բարձր աստիճանի, անամօթութեամբ և լրբաբար կողոպտում էր ժողովրդին: Երկրորդը, թէպէտ ազնիւ կրթւած և սիրալիր էր իր վարմունքով, միևնոյն տեսակ էր վարւում: Նա նրան էր արդարացնում, ով ազնիւ շատ վող էր տալիս իրան:

Այս դրութեան մէջ էին գործերը, երբ Հասան յունւարի օրերը (533 թ.) և յայտարարեցին կրկէսի խաղերի մասին: Ազնիւ լաւ հասկացողութիւն կազմելու համար այն անցքերի մասին, որ մենք ուզում ենք նկարագրել, պէտք է մանրամասնաբար նկարագրել կրկէսը: Կոստանդնուպոլսի կրկէսը կամ հպոդրոմը պատրաստւած էր, որ քանի դնում նեղանում էր և հուսկ էր գալիս կատիզմի մօտ: Բայց ինչ բան էր կատիզմը: Կրկէսի մօտ գտնւում էր կայսեր բնակութեան տեղը, ահագին, լաւ ամրոցի նման, որի մէջ գտնւում էին զանազան շինութիւններ պալատներ, եկեղեցիներ, մատուռներ, բաղանիքներ, սրահակներ, զօրանոցներ, կայսերական պահակազօրքի և պալատում ծառայող մեծ իշխանների համար բնակարաններ: Յետոյ կային ծաղկալի այգիներ, մարմարոնեայ յատակով բաղեր, կեդրոնի անտառներ. դէպի ծովը նայող դարատաիեր, շատրուանները և այլն: Այգիները տարածւում էին մինչև Բոսփոր և Պրոպոնդիտէ:

Արևի կողմը գտնւում էին պալատի այգիները և սրբազան պալատը, կայսեր բնակութեան տեղը և գահասենեակը-Կրեղոտրիկլինէօ: Հիւսիսային կողմը զարդարւած երևում էր Կողքիսի պալատը, որի երեսը Օգոստոսի հրապարակի կողմն էր, սուրբ Սոֆիայի եկեղեցու հանդէպ: Արևելքում ձգւում էին մօտենալով հպոդրոմին, մի կարգ շինութիւնները, նրանց թւումն էր սուրբ Ստեփաննոս անունով եկեղեցին, միւսը կատիզմն էր հանդերձ ամբիոնով, ուր կայսրը ներկայ էր կրկէսի ներկայացումներին: Կատիզմի ներքինը ամփոփում էր իր մէջ ատրիօն, տրիկլինիօն, առանձնարան՝ հանգստանալու համար և ինչպէս նկատւում էր, ամբիոն, որից երևում էր հպոդրոմը:

Կայսրը այս ձևով էր երևում ժողովրդին և ներկայ լինում կրկէսի ներկայացումներին: Ամբիոնը այնպէս էր շինւած, որ կատարեալ ապահովում էր կայսեր անձը վտանգից: Անկարգութիւնների ժամանակ արոյրաշէն դռները փակւում էին և կայսրը մտնում էր իր սենեակները, իսկ դարատոմի վրայ, որ հպոդրոմից տաս մետր աւելի բարձրութեամբ էր շինւած, մնում էր կայսերական պահակազօրքը:

Յունւարի տասերեքին հարիւր հազար հոգի հաւաքւեց հպոդրոմի վրայ: Մայրաքաղաքի բոլոր պատուաւոր անձինք ներկայ էին. պատրիարքը, պատրիկները, կոմսերը, դքսերը բռնել էին իրանց օթեականները: Այնուհետև եկան կայսերական պահակազօրքի սպաները և բռնեցին իրանց տեղերը դարատաիի վրայ: Բայ եղան արոյրաշէն դռները և Յուստինեան կայսրը թիկնոցը վրան և թագազգին գլխին, երևայ ժողովրդին: Ամեն կողմից ընդունելութեան աղաղակներ բարձրացան: Յուստինեանը երեսը խաչակնքեց, աղերսեց առ Աստած, որ Նա օրհնէ իր ժողովրդին և նստեց: Նրա մօտ կանգնած էին. կայսերական պահակազօրքի հրամանատար Բելիզարիոսը, Զիօւանննի Կապադոչչիան, Տրիբոնիանոն, Իննդիմիոնէ կուսակալը և Կալէպոդիոն: Կայսրուհի Թէոդորան բացակայ էր. նա առհասարակ չէր սիրում ժողովրդական դումարում-

Բաքախանի—Բագուի նաւթային հանքերը.

ները, նամանաւանդ կրկէսը։ Յուստինիանի կինը այդ ժամանակ ներկայ էր կատէկումէնիայի ձիարշաւներին։ Այն ինչ կարգադրիչների նշանով ասպարէզ դուրս եկան երկու կառք։ Ընդամենը քսան և հինգ մրցում էր նշանակուած։ Կառքերի երեւալուն պէս, կապոյտները լուռութիւն պահպանեցին, բայց կանաչները բարձրաձայն արտայայտում էին իրանց անբաւականութիւնը։ Այդպէս անցան բոլոր քսան և հինգ մրցութիւնները։ Կայսրը սկզբում ուշադրութիւն չդարձրեց կանաչների շփոթելու վրայ։ Բայց երբ վերջինների ձայնը աւելի բարձրացաւ և սպառնալի բնաւորութիւն ստացաւ, Յուստինիանը հրամայեց իր աջակցին լռեցնել ապստամբներին։ Աջակցի միջոցաւ կայսրի և ժողովրդի մէջ տեղի ունեցան տարօրինակ բանակցութիւններ։

— Աստուած երկար կեանք տայ քեզ, ով մեծն Յուստինիան, ասում էր իր աջակիցը,— լսիր, ով քաջ, մեր խնդիրը. մեր տանջանքները մեծ են և վկայ է Աստուած, որ մենք այլ եւս այժ չունենք համբերելու։ Մենք չենք կարող յայտնել նրա անունը, որ մեր տանջանքների պատճառն է, մենք վախենում ենք նրա վրէժխնդրութիւնից։ Դու, արքայ, պէտք է իմանաս, թէ ով է մեզ տանջողը։

— Ես նրան չեմ ճանաչում, պատասխանեց կայսրը։

— Ի՞նչպէս չես ճանաչում, աղաղակեց կանաչների պատգամաւորը, կորցնելով իրան, դու չե՞ս ճանաչում քո մերձաւորին, որ ճառայում է նոյն խոկ քեզ մօտ, պալատում։

— Իմ մերձաւորներից ոչ մէկը չի վիրաւորում ժողովրդին, պատասխանեց Յուստինիանը։

— Ո՛չ, դու լաւ ես ճանաչում նրան, աղաղակում էին բոլոր կանաչները։

— Ուրեմն ասացէ՛ք նրա անունը։

— Լաւ։ Մեր պահիճը ձեր Թիկնապահ Կալէպոդիոն է։

— Սուտ է։ Կալէպոդիոն ձեզանով չէ հետաքրքրւում։

— Ո՛չ, նա մեզ տանջողն է, նա Յուդա է, Աստուած կրկարձատրի նրան իր արարմունքի համար։

— Ես նկատում եմ, դուք եկել էք այստեղ, որ վիրաւորէք իմ մերձաւորներին, առաջ կայսրը։

— Այո՛, աղաղակեցին կանաչները, շուտով վերջ կըտրւի Յուդայի կեանքին։

— Լռեցէ՛ք դուք, վարխեցէ՛ք։

Այն կրօնական խռովութիւնների ժամանակ, այդ տեսակ անունը սաստիկ վիրաւորանք էր համարւում։

— Դուք կրգխատւէք, եթէ չըդադարէք,— բարձրաձայն յայտնում էր աջակիցը կայսեր լսօսքերը։

— Ամեն մէկի համար կեանքը թանդ է, բայց մենք չենք կարող հանդուրժանալ։ Եթէ մենք այնպիսի բան ենք ասում, որ քեզ չի դուր գալիս, թագաւոր, ուրեմն ի նկատի ունեցիր, որ ինքը Աստուած համբերութեամբ լսում է մեղաւորի աղօթքը և դու էլ մեզ պէտք է լսես։ Քո մայրաքաղաքում այլ եւս դոյութիւն չունի կեանքի ապահովութիւնը խաղաղ բնակիչների համար։ Ոչոք չի համարձակւում երեւալ փողոցում, վախենալով, որ կըսպանուի։ Մութը ուրեմն մեր դրութեան մէջ, թագաւոր, և պաշտպանիր մեզ։

— Յիմարութիւն է։ Ամեն մի քաղաքացի կարող է դնալ ուր կամենայ, բոլորովին անվտանգ։

— Ո՛չ, յիմարութիւն չէ, այլ կատարեալ ճշմարտութիւն։ Բաւական է պատկանել կանաչների կուսակցութեան և բոլորովին անպատիժ կարելի է սպանուել օրը ցերեկով, փողոցի մէջ տեղ։

— Դուք սուտ էք ասում։

— Ո՛չ, մենք ճշմարիտն ենք ասում։ Հենց նոյն խոկ այսօր սպանուել է Զէնոնի անունով ատաղձադործը։ Եւ դա տասն և եօթերորդ սպանութիւնն է ամենակարճ միջոցում։

— Դուք լինքներդ էք աւազակները, սպանում էք, յետոյ ուրիշներին մեղադրում, աղաղակելին կապոյտները։

— Իսկ ով սպանեց ատաղձադործին։

— Իհարկէ, դուք։

— Ո՛չ, դուք սպանեցիք։

— Իսկ Իպազատոյի որդուն ով մեռցրեց։

— Իհարկէ դուք, կանաչներդ.

— Ո՛չ, դուք, կապոյտներդ։

— Ո՞վ մեծդ Թազաւոր։ Արդարադատ եղիր, ասա, ով է կատարում սարսափելի սպանութիւններ,— աղաղակեց հռետորը, մենք թէ կապոյտնե՞րը։

— Ի հարկէ դուք, պատասխանեց կայսրը։

— Ո՞վ տէր Աստուած։ Ո՞ւր է այստեղ արդարադատութիւնը։

— Լռեցէ՛ք, վերջապէս, դարձաւ աջակիցը կանաչներին կայսեր կողմից։

— Լաւ, մենք կըլռենք, եթէ քեզ այդ, Թագաւոր, ցանկալի է և կըհեռանանք այստեղից։ Աւելի լաւ է հրէայ դառնալ, վերջապէս կուսապաշտ լինել, քան թէ կառավարւել կապոյտներով։

— Սարսափելի է, աղաղակեցին կապոյտները— ինչ չարագործներն են։

— Թող ձեր մահից յետոյ ձեր ոսկորները հողին չըյանձնուեն, պատասխանեցին նրանց կանաչները և դուրս եկան կրկէսից։

Դրանից աւելի վիրաւորանք տալ կայսերական մեծութեանը անկարելի էր։ Յուստինիանը նոյնպէս վեր կացաւ և մտաւ իր սենեակները։ Նրա բարկութիւնը սարսափելի էր։ Ներկայացումները ընդհատուեցան։ Կապոյտները ամաչեցին և նոյնպէս շտապեցին շուտով թողնել կրկէսը։

Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

(Կըշարունակի)

Անցեալ շաբաթ օպերային ներկայացումներն այնքան էլ աջող չէին մուտքի կողմից, չընայած որ Սեն-Սանսի Սամսոն եւ Դալիլա օպերան երկու անգամ շաբաթւայ ընթացքում երգուեց և Սիւներբերգ հաւանականօրէն պիտի շատ լաւ Դալիլա լիներ։

Պ. Պերեսի բենեֆիսին միայն, երկուշաբթի օրը, մեծ բազմութիւն էր եկել ի հարկէ ոչ թէ Կարմէն-Սիւներբերգին տեսնելու, այլ Դօն-Խոզէ-Պերեսին տեսնելու, որը իսպանացի լինելով, բացի յաջող երգելուց և գեղեցիկ կատարեց դերը։ Պ. Օրրաջդով իր ծայնի քնքոյշ տեմբրով չարմար չէր տօրէադորի դերում։ Պերեսն էլ ստացաւ թանգագին ընծաներ և դափնեայ պսակներ։ Սակայն Կարմէնը դարձեալ չաջող չէր կարելի համարել։

Գուցէ տիեզերահռչակ Ադել Բօրդու մեր քաղաքում հիւր լինելը նախապաշարում է մեզ ազատ որոշում անելու տ. Սիւներբերգ-Կարմէնի մասին։ Սակայն իւրաքանչիւր երաժշտասէր կհամաձայնի մեզ հետ, որ չիսունևհինգ սարեկան Ադէլ-Բորդի իր ելեւէջ ոչ մաշած, գոնէ յոգնած, բայց հզօր ձայնով, սքանչելի տեխնիկայով դարձեալ մի այնպիսի Կարմէն է երգում, որի նմանը Թիֆլիսը երբէք չի լսել։

Յունուարի 16-ին Թիֆ. ժողովար. Ադել Բորդու կոնցերտը չօգուտ հարեդործ. Ընկ. մի այնպիսի էստետիկ մեծ հաճոյք պատճառեց ահագին դահլիճը լցած բազմութեան, որ շատ անգամ նրան կրկնել տւին պրոգրամից դուրս և մի քանի կտորներ։

Տիեզերահռչակ Կարմէն-Բորդին մեծ ճաշակով և զգացումով երգեց Մինիօնից ու Cavalleria-ից մի քանի արիաներ։ Զուտ եկամուտ անշուշտ 1000 ր. աւելի կըմնայ չարեզործ. Ընկ. Մեր փափկասուն կանայք էլ մի քանի հարիւր րուբլու շամպայն և ծաղիկներ վաճառեցին։

—

Այսօր, յունուարի 19-ին չօգուտ ռուս Թատրոնական Ընկերութեան, որ Թագաւոր Կայսեր հովանու տակ է գըտնւում, արտիստիկ ընկերութեան դահլիճում տրւելու է մի ներկայացում մասնակցութեամբ պ. պ. Օպօչինինի, Պալսոմովի, Ֆորկատտու և այլոց։

—

Ձուշուց մեզ հաղորդում են, որ թատերասէրները պատրաստւում են Խարբնապետ պիէսը ներկայացնելու հայ փախստականների օգտին։ Ցաւում ենք միայն, որ այնտեղի գործիչներն էլ կուսակցութիւնների են բաժանւել։ Այդ ներկայացման մասնակցելու են տ. Ն. Եարամիշեան, օր. Վ. Զաքարեան և Ն.

—

Մենք առիթ ունեցանք մի քանի անգամ այցելելու մալօրօսների դրամատիքական խմբի ներկայացումները, որ տրւում են ազնւականների թատրոնում։ Խումբը կազմւած է շատ աջող։ Կան մի քանի դերասանուհիներ և դերասաններ, որոնք կարող են պատիւ բերել ռուսաց ամենաառաջնակարգ թատրոններին։ Մեր տպաւորութեամբ Զարնիցկայեա կարող է աջող մրցակից լինել տիկ. Սավինայինի։ Նրա խաղը լի է զգացումներով և խելացի է. դէմքը արտայայտիչ, միմիկան հարուստ։ Զօրեղ դրամատիքական դերերում նա միանգամայն չափշտակում է հանդիսականներին, կենդրոնացնելով նրանց ուշադրութիւնն իր վրայ։ Նա երգում էլ է, և երգում է շատ աջող։ Մեր օպերային թատրոնի այժմեան մի քանի դերասանուհիներ անգամ կարող են նախանձել նրա ձայնի տեմբրին, մանաւանդ զգացումներին։ Միւս դերասանուհիներից աչքի են ընկնում Կալանովսկայեա և Զարնովսկայեա, առաջինը ծեր կանանց, երկրորդը սուբրետ դերերում։

Գալով դերասաններին, առաջին տեղը պիտի տալ պ. Սուվօզուսկուն, որը թէ դրամատիքական և թէ կոմիքական ծերերի դերերում միանգամայն գրաւիչ է։ Նրա իւրաքանչիւր ձևերն ու խօսքը չափած է ու մտածած։ Առանձին ուշադրութեան արժանի է նրա դրիմը, մի բան, որ ամեն դերասանի չի աջողւում։ Դրամատիքական դերերում աչքի է ընկնում պ. Սուսլով։ Իսկ կոմիքականներում պ. Զարկովսկի։ Վերջինը և գեղեցիկ պարող է։ Ընդհանրապէս խմբի անսամբլը գեղեցիկ է և լիակատար։ Բազկացած է այդ խումբը մօտ 40 հոգուց, և այդ նրա համար, որ դրեթէ բոլոր մալօրօսական պիեսներում կան խօրային երգեր և պարեր, որ պահանջում են մեծ թւով մասնակցողներ։

Թէ տղամարդկանց և թէ կանանց խումբը երգում է սիրուն և մարդ մի առանձին հաճոյքով է լսում մալօրօսների ժողովրդական մօտիւները, որ մեծ մասամբ մելամաղձոտ են և վըշտահնչիւն։

Խումբը արժանի է ամենայն ուշադրութեան ու համակրանքի։ Զարմանալի չէ ուրեմն, որ Թիֆլիսի հասարակութիւնը սիրով է այցելում նըրա ներկայացումները, և շատ անգամ թատրոնը ծայր է ի ծայր լիքն է լինում։ Մի թերութիւն, որ աչքի է ընկնում այդ ռեպերտուարի դրականական արժանաւորութեան պակասութիւնն է։ Պիեսները մեծ մասամբ մելօդրամներ են, լի անհեթեթ դրուագներով և սիրտ կեղեքող սոսկալի եղեռնագործութիւններով։ Երբեմն բեմի վրայ այնպիսի անբնական երևոյթներ է տեսնում հանդիսականը, որ միայն վաղեմի ֆրանսիական մելօդրամների մէջ կարելի է հանդիպել։ Առհասարակ պիեսները գրականական տեսակետից չեն դիմանում ամենատարրական կրիտիկայի, բայց նրանք լի են էֆէկտներով, որոնք երբեմն սքօղում են հեղինակների նաև գաղափարները։

Չայոց դերասանական խըմբին խորհուրդ կըտայինք այցելել մալօրօսների ներկայացումները։ Նա շատ բան կարող է սովորել այդ ներկայացումներից, դէթ կարող է տեսնել, թէ դերասանները որքան բարեխիղճ պիտի վերաբերւին իրանց արհեստին։ Այս կողմից մալօրօսները կարող են շատ խրատական օրինակներ տալ մեր անփոյթ, ծոյլ դերասանուհիներին և դերասաններին, որոնց համար մտաւոր զարգացում և ճաշակի նրբացում, ասած բաները, կարծես, գոյութիւն չունեն։

—

Ամսոյս 16-ին, հինգշաբթի ազնւականների թատրոնում կայացաւ պ. Սարգարեան-Արեւշատեանի բենեֆիսը

Երեկոյթի հետաքրքրական մասն էր պ. Էմին Տէր-Գրիգորեանի նոր պիեսը Դամոկլեան սուր, դրամա-էտիւդ 2 դործ. Պ. Էմին Տէր Գրիգորեանը այն երջանիկ մարդկանցից է, որոնք ապրում են իլլիւզիայով։ Քանիցս անգամ այս մարդը բեմ է դուրս բերել իր գրչի արդիւնքները, քանիցս անգամ անաչողութեան հանդիպել — չի յուսահատւում։ Տաղանդաւոր հեղինակի համար այս յատկութիւնը անգնահատելի կըլինէր։ Պ. Է. Տէր-Գրիգորեանի համար դա մի վնասակար ինքնախաբեութիւն է։ Պէտք է մի օր այդ մարդը, վերջապէս հասկանայ, որ ինքը, գրամատուրգ չէ, թէ հէնց պիտի ապրէ իլլիւզիայով և մեզ էլ տարէնը մի անգամ տանջէ թատրոնում։ Այն Դամոկլեան սուրը, որ մենք տեսանք անցեալ հինգշաբթի, մի բութ դանակ էր. որով մեր դերասանները ստիպւած էին երկու ժամ շարունակ քերթել մեր ջղերը։ Հետևաբար հաղորդել այս բութ դանակի բովանդակութիւնը-կընշանակէ նոյն օպերացիան կատարել և ընթերցողների վրայ։ Խոստովանում ենք, մեր ուժերից վեր է Դամոկլեան սրի քննադատութիւնը։ Թողնում ենք այս պաշտօնը հայ մամուլի նորաբողբոջ երևելի քննադատներին, որոնք ընդունակ են նոյն իսկ Շիլլերին և Շէքսպիրին մի գաւաթ չրում խեղդել, այնքան սոսկալի են նրանք իրանց դրականական զարգացումով։

Իսկ մենք միայն կարող ենք խղճալ մեր ապաթախտ դերասաններին, որ երբեմն ստիպւած են իրանց ուժերը սպառել որպէս զի վերջն ասեն *բաղում աշխատեցանք եւ ոչինչ շահեցանք։* Ի՞նչպէս չըցաւել, օրինակ, տիկին Զաբէլի մասին, որ այնքան աշխատել էր իր դերն ուսումնասիրելու, այնքան հարստացրել էր իր միմիկան և ձևերը, և այնուամենայնիւ չըկարողացաւ փրրկել պ. Է. Տէր-Գրիգորեանի հանճարի արդիւնքը։ Նաև ինչպէս չըցաւել տիկ. Մելիքեանին, պ. Օհանեանին, որ այնպէս խնամքով պատրաստել էին իրանց դերերը։ Իսկ մանկահասակ օրիորդիկ Վ. Մելիքեանը... Այս հրեշտականման էակը իր բոլոր անմեղ թոթովանքներով որքան և նպաստ էր պ. է Տէր-Գրիգորեանի հուչակին, ինչ կարող էր անել նրա Դամոկլեան սուրը բթութիւնից ազատելու համար։

Այն էլ ասենք, պարտքի տակ չըմնալու համար, որ թատրոնը լի էր *մեծ հանդէս քննեֆիցիանտի։* Այն էլ ասենք, որ Դամոկլեան սուրի մի լաւ ընկերակից էր Օրթաճալի քէֆի անունով վոդեվիլը, որ մեծ հաճոյք պատճառեց զուռնասէր ամբոխին։

Ջնորհակալութիւն պ. Արաքսեանին, որ ներկայացման վերջում գէթ մասամբ մեր ջղերին հանգստութիւն տըւաւ իր կենդանի խաղով Ջէգլօվի *Բժիշկն ընդունում է* դեղեցիկ վոդեվիլի մէջ Թաթոսի դերում։ Այս վոդեվիլը թարգմանել է պ. Սարդարեան և անունը դրել Թաթոս։ Ահա եթէ այսպիսի Թաթոսների վրայ գործ դնէ իր թարգմանական և փոխադրական աշխատութիւնը պ. Սարդարեան — մենք միշտ կըխրախուսենք նրա գործունէութիւնը...

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԱՆԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ

Յունուարի 14-ին Նորին Վեհափառութեան Անանակոչութեան օրը, հետևեալ հեռագիրը բախտ ունեցանք ուղարկելու Էջմիածին։

Ընդհար-Տարագի խմբագրութիւնը խոնարհելով առ յոտս Հայրիկի իր որդիական անձնուրութիւնը, շնորհաւորում է Նորին Վեհափառութեան անանակոչութիւնը։

Խմբագրութեան անդ. և աշխատ. Յ. քահանայ Տէր-Պետրոսեանց, Իշխանուհի Մար. Թումանեանց, Ղ. Ազայեանց, Բժշկապ. Ֆ. Նաւասարդեան, Զիրվանզադէ, Յովհ. Թումանեանց, Իս. Մարկոսեանց, Յար. Թումանեանց, Եղ. Թովմչեանց, Կ. Մարտիրոսեանց Սրինգ, Տ. Նազարեան։

ՄԱՀՓՈՅԻ

ԿՈՄՈՒՀԻ ՍՈՓԻՍ ՏՏՏԻԶԵԻՆ

Ուրբաթ, յունուարի 17-ին, երեկոյեան ժամը 7-ին երկարատև հիւանդութիւնից յետոյ Թիֆլիսում վախճանւեց Կովկասեան կառավարչապետի պաշտօնակատար կոմս Տատիշչեւի ամուսինը։

Հանգուցեալը իր բարի բնաւորութեամբ եւ գործերով գրաւել էր Թիֆլիսի բոլոր խաւերում իրեն ճանաչողների սէրն ու յարգանքը։

ՄԵՐ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ՎԱՐՔ ՈՒ ԲԱՐՔԻՑ

Գրիգոր Արծրունու Մշակը այսօր մի քանի վարձկանների ձեռքում օրօրի վրայ ընկնում է և կորցնում ազգի մէջ իր դերն ու նշանակութիւնը։ Սրտի ցաւօք կարդացինք Մշակի № 5 հագւից մի թղթակցութիւն։ Երկու անմեղ մանուկներ Սարգիս և Գէորգի Մելիքեանց, մէկը ութամեայ, միւսը վեցամեայ հագւում «Ազետից» են մանեկել 638 ր. ժողովել Թիւրքիայից գաղթած երեխաների համար և այդ դրամը, ճանապարհածախսը ու երեխաների ֆայտոնով մանը գալու վարձը դուրս եկած 10 ր., մնացեալն ուղարկել են Մշակին։ Մանուկների ուսուցիչ պարոնն է ուղեկցել նրանց և անշուշտ այդ նամակը երեխաների կողմից գրել։

Գովում ենք պ. ուսուցչի եռանդը, որ իր սաների մէջ գթութեան առաքինի սերմեր է ցանում։ Բայց ինչով բացատրել Մշակի այդ հակամանկավարժական վարմունքը, որ այդ տեսակ սիրուն նամակներ տպագրելով երեխաների լեզւից, զարթեցնում է նրանց մէջ *մնափառութիւն։* Չինգանկիւնանի, մի քանի տեսակ երեսանի խմբագրութիւնը արդէօք մի վայրկեան մտածեց թէ ինչ վնասակար օրինակ է տալիս հայ երեխաներին։ Այդ տեսակ նամակները մանուկներին չեն կարող խրախոյս լինել, նրանք ընդհակառակ կըսերմանեն երեխաների մէջ չար նախանձ, *սնափառութեան* զգացումներ, աստելութիւն դէպի նրանք, որոնք այդ տեսակ լաւ գործ են անում, իսկ իրանք ակամայ անզօր են հետևել նրանց բարի օրինակին։ Յոյս ունենք Մշակը կըխոստովանէ թէ ինքը հայ մանուկներին ինչ տեսակ առջի ծառայութիւն արաւ։

Պ ր ո գ ա կ ա ն

Հարծրադոյն հրամանով Նիկոլայ I կայսեր օրով բացւած կանանց դեմնազիանարիում, կամ այլ դպրոցներում, որ այժմ դիմնազիաների են փոխւած պէտք է իւրաքանչիւրում ընդունւեն մի-մի աշակերտուհի եւս իբրեւ Նիկոլայ I կայսեր ստեղծողիանտներ։

—Մեծ զարմանք է պատճառում մեզ այն լուրը, որ սրբազան Խորէն եպիսկոպոս Ստեփանէն հագւից գնում է Ս. Խաչ։ Անշուշտ դա մի մեծ պատճառ ունի եւ ցաւում ենք, որ մեր եզակի այն հոգեւորական-

ները, որոնք սերտ սիրով կապած են եկեղեցու եւ նրա հոտի հետ ու ծառայում են ազգին, նրա առաջադիմութեան եւ բարօրութեան համար ուղիղ ճանապարհ հարթողներ են, յաճախ կրում են, կամ ստիպուած են լինում կրել, եւ այն տեսակ պաշօններ, որ շատ հեշտութեամբ կարող կը լինէր կատարել եւ մի մահկանացու արեղայ։

Դատաստանական

Տարազի Հետեւեալ №-ում պիտի տպագրենք դատաստանական պալատից մեր ստացած արձանագրութիւնից քաղուածքներ, որից ընթերցողը կը տեսնի, որ Արձագանքի խմբագիրը պ. Աբգար Յովհաննիսեան նահանգական եւ պալատական դատարանից ճանաչուեց հասարական, եկեղեցական, ուսանողական դրամներ սեւհագնող եւ պ. Ա. Յովհաննիսեան այդ վճիռների դէմ չբողոքեց։

